# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ-ն ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 14 | Home Rest | Home Rest | Berta | Արտակ Կարապետյան Հայկի ԱՁ | Մահճակալները պատրաստվա են 18 մմ հաստությամբ լամինատից: Երկարությունը ներսից -ներս՝ 140 սմ, լայնությունը՝ ներսից-ներս 70 մ, բարձրությունը 130 սմ: Առաջին հարկի մահճակալի ամրագոտիների վերևի մասի բարձրությունը հատակից՝ 27սմ, լամինատե ամրագոտիների լայնությունը՝ 18 սմ, երկարությունը 140սմ: Երկու հարկերի միջև հեռավորությունը՝ 65 սմ: Երկրորդ հարկի մահճակալի լամինատե ամրագոտիները է ունեն 140 սմ երկարություն մեջտեղի հատվածում բարձր կլորացրած, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | որպեսզի անվտանգ պահպանի երեխայի երկրորդ հարկից վայր ընկնելուց: Վերևի ամրագոտիների նեղ հատվածների լայնությունները` 25 սմ, երկարությունը 48 սմ, իսկ մեջտեղի լայն հատվածի լայնությունը 38 սմ, երկարությունը` 44 սմ: Երկրորդ հարկի ամրագոտիների բարձր հատվածը հավասար է մահճակալի վերևի հատվածին: Ունի գետնից երկրորդ հարկի մահճակալ բարձրացող աստիճան 120 սմ երկարությամբ և 40 սմ լայնությամբ: Սնարների բարձրությունը 120 սմ, որոնց վերևի մասի լայնությունը 7 սմ է, իսկ ներքևի լայնությունը 16 սմ, սնարները իրար միանում են չժանգոտվող փայլուն մետաղական վեց ձողերով` չափերը 38*2,5 սմ, որոնք ամրանում են սնարների չժանգոտվող մետաղական ֆլանեցներով, վերջիններս ամրանում են սնարերին հեղյուսամանեակային պտուտակներով: Ձողերի առանցքների հեռավորությունը իրարից 20 սմ է, իսկ առաջին ձողի առանցի բարձրությունը հատակից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 14 սմ: Մահճակալի և սնարների անկյունները կլորացված են և պատված ՊՎԽ-ի խրվող ժապավենով: Աստիճանը ամուր կերպով ամրացված է մահճակալի երկու ամրագոտիների մի կողմից հեղյուսամանեկների միջոցով: Լամինատե դետալների եզրերը եզրակալվում են ՊՎԽ-ի խրվող ժապավենով , որպեսզի զերծ մնանք անկյուններից և անվտանգ լինի երեխաների համար: Ներքնակների տակ տեղադրել ամբողջական 16 մմ հաստությամբ ԴՍՊ վերջինս հենվում է լայնությամբ ամրագոտիների մեջտեղից անցնող 20*20 մմ մետաղական գոտու վրա, որը ամրանում է ամրագոտիներին մետաղական թիթեղներով , և ամրագոտիների երկարությամբ ձգվող փայտից գոտիների վրա: Մահճակալների գույները և գույների համադրությունները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Առաքումը և տեղադրումը ըստ պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԻ ԱՁ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 14 | | | | | |